ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ համայնքապետարաններում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և կիրառության ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ

(2019թ. հուլիսի 1-ի դրությամբ)

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ ստեղծված Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը Ինտրանետ (Intranet) / Ինտերնետ (Internet) միջավայրում գործող ավտոմատացված համակարգերի (ենթահամակարգերի) և Web էջերի համախմբություն է: Համակարգի հիմքում ընկած է տեղեկատվության ստացման, մշակման, փոխանակման միասնականության և միասնական տեղեկատվական տարածության գաղափարը:

Համակարգը բաղկացած է բազմաթիվ գործառնական և կառավարման բաղադրիչներից (ենթահամակարգերից), ինչպես նաև այլ համակարգերի հետ համակցման մոդուլներից:

ՀԿՏՀ-ի՝ էլեկտրոնային ծառայությունների մատուցում ենթադրող բաղադրիչներն են.

-Թույլտվությունների, տեղական տուրքերի և վճարների կառավարման ենթահամակարգ,
-ՏԻՄ-երի իրավական ակտերի մշակման և կառավարման ենթահամակարգ,
-Ծառայությունների ընթացակարգերի վարման համակարգ,
-«Առցանց ծառայություններ» հավաքածու,
-Առցանց դիմումներ, հարցումներ և բողոքներ ներկայացնելու համակարգ,
-«Թեժ գիծ» և այլն:

- ՀԿՏՀ-ն գույքային հարկերի կառավարման համակարգի (ԳՀԿՀ) հետ ինտեգրումն ապահովում է գույքային հարկերի պարտավորությունների մասին առցանց տվյալների ստացման, հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀԿՏՀ միջոցով տեղեկանքների պատրաստման և բնակչին տրամադրման, ինչպես նաև այլ հնարավորություններ:
- ՀԿՏՀ-ում eID և mID տեխնոլոգիական լուծումների կիրառում իրականացվում է խիստ նույնականացմամբ օգտատերերի մուտքը համակարգ, ինչի շնորհիվ քաղաքացիները կարող են ՏԻՄ-երին ներկայացնել պաշտոնական դիմում, հարցում, բողոք, ստանալ առցանց ծառայություններ և այլն:

Ներկայումս համակարգը ներդրված է հանրապետության **502** համայնքներից մոտ **400**-ում: Թվով **52** միավորված բազմաբնակավայր համայնքներից **40**-ում գործարկված է ՀԿՏՀ-ի՝ բազմաբնակավայր համայնքի համար մշակված տարբերակը, որի շնորհիվ ՏԻՄ-երի կողմից էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունները հավասարապես հասանելի են դառնում նման համայնքների բոլոր բնակավայրերում ապրող բնակիչների համար:

Այս համակարգի շնորհիվ ՏԻՄ-երը հնարավորություն են ստանում էլեկտրոնային եղանակով իրականացնելու իրենց հիմնական գործառույթները: Մասնավորապես, ՀԿՏՀ-ի միջոցով էլ. փաստաթղթաշարժ են իրականացնում ավելի քան **300** համայնքներ, իսկ մոտ **250** համայնքներում այս համակարգը հանդիսանում է նաև համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայք: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի՝ 3000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքները պետք է գործարկեն համացանցային պաշտոնական կայքեր, որոնց բովանդակության նկատմամբ պահանջները ևս սահմանված են վերոնշյալ հոդվածով: Նման համայնքները հանրապետությունում **153** են, որոնք իրենց գործունեությանն առնչվող և օրենսդրությամբ պահանջված տեղեկատվությունը հրապարակում են պաշտոնական համացանցային կայքերի միջոցով:

Հայաստանի **42** համայնքապետարաններում գործում են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ): ՔՍԳ-ն հնարավորություն է ընձեռում համայնքապետարանին «մեկ պատուհան» սկզբունքի համաձայն քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, դյուրացնել համայնքապետարաններում իրականացվող վարչական գործընթացները: ՔՍԳ-ներից **39-ը** հիմնվել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համատեղ, Շվեյցարիայի զարգացման գործակալության և ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ: ՔՍԳ-ների կողմից տրամադրվող ծառայությունների հիմնական տեղեկատվական պլատֆորմը ևս **ՀԿՏՀ**-ն է:

Այսպիսով, ՔՍԳ-ների գործունեության և ՀԿՏՀ-ի կիրառության շնորհիվ Երևանից դուրս բնակվող բնակչության գրեթե **40** տոկոսը հնարավորություն ունի օգտվելու բարելավված համայնքային վարչական ծառայություններից:

Համայնքային տեղեկատվական հոսքերի
կառավարման բաժնի պետ
Գ.Մանուկյան